

ԼԵՆԻՆՅԱՆ ԹԵՄԱՆ
ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հ. Մ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Մարիետա Շահինյանը սովետական այն գրողներից է, որին լենինյան թեման տասնամյակներ շարունակ ղեկավարում է, հանդիսանալով նրա նախասիրություններից մեկը:

Մ. Շահինյանին լենինյան թեման հետաքրքրում է ոչ միայն իբրև գեղարվեստական ստեղծագործությունը սնող հարստագույն աղբյուր, այլև որպես գրող-հետազոտողի, մտածող-հրապարակախոսի մտորումների մշտական առարկա:

Մ. Շահինյանի հետաքրքրությունը լենինյան թեմայով սկսվում է դեռևս 1920-ական թթ., երբ նա առաջիններից մեկը սովետական գրականության մեջ, գրեց իր «Փոփոխություն» վեպ-եղելությունը՝ «վերապրածի թարմ հետքերով, օրագրերի ու թերթերի հիման վրա»: Վեպը արվեստի իսկական գործի ներշնչանքով պատմում էր հին աշխարհի կործանման ու սոցիալիստական հեղափոխության հաղթանակների մասին:

Ճիշտ է, «Փոփոխությունում» անմիջապես չէր պատկերվում լենինի կերպարը և ոչ էլ խոսվում նրա մասին, սակայն վեպն իր ամբողջ պաթոսով արտացոլում էր լենինյան գաղափարների հաղթարշավը, պայքարում հանուն դրանց իրականացման և հաստատման, խոսում քաղաքացիական կռիվների ամենադրամատիկ պահերից մեկի՝ Ռուսաստանի հարավում ծավալված դասակարգային կատաղի մարտերի մասին: Հեղափոխության ոռոմանտիկային էին նվիրված նաև Շահինյանի «Վերնախավի տիկնոջ արկածները» (1923) վեպը, «Ազիտ-վագոն» պատմվածքը:

«Փոփոխություն» վեպը (1923), ինչպես հեղինակի «Սովետական Հայաստան» (1923) գիրքը և մի շարք ակնարկներն ու հոդվածները, տպագրված «Պրավդա», «Պետրոգրադսկայա Պրավդա» և «Նովայա Ռոսսիա» պարբերականներում, ժամանակին արժանացել են Վ. Ի. Լենինի գովասանքին: Այդ մասին «Կրասնայա Նով» ամսագրի խմբագիր Ա. Վորոնսկին Մ. Շահինյանին ուղղած 1923 թ. մարտի 17-ի նամակում գրում էր. «Գիտե՞ք, Ձեր գործերը դուր են գալիս լենինին»¹:

Տարիներ անց Մ. Շահինյանը նշում էր, որ Վլադիմիր Իլյիչի այս կարծիքը թանկ է եղել իր համար, «լուսավորել է իմ ամբողջ սովետական կյանքը, ռդնել դիմանալու ծանր րոպեներին և ուժեր տվել կրկին ու կրկին աշխատելու, հաղթահարելու սեփական թուլություններն ու սխալները»²:

¹ М. Шагинян, Дневники, 1917—1931 гг., Л., 1932, էջ 68:

² М. Шагинян, Семья Ульяновых. Очерки и статьи. Воспоминания, М., 1959, էջ 664:

1923 թ. մարտի 20—21-ի օրագրում Մ. Շահինյանը նշում էր. «Ուժեղ ցանկություն եմ զգում շարունակել գրել «Փոփոխությունը», որպեսզի նա (Լենինը—Հ. Մ.) կարգա»³:

Վ. Ի. Լենինի մահից հետո (այս կապակցությամբ Մ. Շահինյանը հանդես եկավ «Լենինի մահը» հոդվածով և նույնանուն բանաստեղծությամբ) նա որոշում է «...գնալ Տորնտոն ֆաբրիկա, որ կապված էր Լենինի կողմից գրված առաջին թոուցիկի հետ... այնտեղ, որտեղ դեռևս թարմ էին երիտասարդ Լենինի իննսունական թվականների աշխատանքի հետքերը...»⁴: 1925 թ. Մ. Շահինյանը երկարատև պրպտումների ու արխիվային նյութերի ուսումնասիրությունների հիման վրա գրում է «Տորնտոն ֆաբրիկան» ակնարկը: «Տորնտոն ֆաբրիկան» Վ. Ի. Լենինի հեղափոխական գործունեության արշալույսին նվիրված սովետական առաջին ակնարկներից էր: Նրանում պատկերված է 1890-ական թթ. երիտասարդ Լենինի գլխավորությամբ սկզբնավորվող առաջին ռուսական բանվորական հեղափոխական խմբակների մթնոլորտը, խմբակներ, որոնք հետագայում լիցքավորեցին հրկրով մեկ ծավալված հեղափոխական պայքարը:

Ակնարկը ժամանակին արժանացել է Ն. Կ. Կրուպսկայայի գովասանքին: Հեղինակին ուղղած նամակում նա գրում էր. «Թանկագին ընկեր, կարդացի Ձեր «Տորնտոն ֆաբրիկան»... Այն ինձ դուր եկավ»:

Հետաքրքրությունը դեպի Վ. Ի. Լենինը, նրա գործն ու ուսմունքը 1920-ական թթ. Մ. Շահինյանին դբադեցնող կարևորագույն նախասիրություններից է: «Հեղափոխության առաջին տարիներից ինձ համար Լենինը այն դիտակցությունն էր ու սերը, որոնք օգնեցին ինձ քրիստոնեությունից կոմունիզմին անցնելու»— ասել է Մ. Շահինյանը⁵: Գրողի այդ թվականների օրագրերում հաճախ են հանդիպում այսպիսի գրառումներ. «1928 թ. հունվարի 21—24-ը. Այս օրերին ընթերցում էի Լենինին, որի մոտ գտա Ի. Ի. Սկվորցով-Ստեպանովի «ԲՄՖՀ էլեկտրիֆիկացման մասին» գրքի առաջաբանը»⁶: «1929 թ. 25 նոյեմբերի—6 դեկտեմբերի. Կրկին ընթերցում էի Լենինին. 10-րդ հատորը («Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ»)⁷, իսկ դեկտեմբերի 8-ի օրագրում գրված է. «Լավ է Լենինին կրկին ընթերցելը... Նա փրկսոփայության մեջ էլ ինձ համար ամենամոտիկն է...»⁸:

Սովետական իրականությունը, սոցիալիստական շինարարության պրակտիկան Մ. Շահինյանի կրթոտ ուսումնասիրության առարկաներն են 1920-ական թթ. նրա բազմաթիվ ակնարկներում: Իրականությունը ավելի մոտիկից ճանաչելու, նրա անցքերին անմիջականորեն մասնակցելու ցանկությունն է, որ Մ. Շահինյանին բերում է Ձորագէսի շինարարություն, ուր նա ապրում և աշխատում է 1927—1931 թթ.:

Դեռևս 1926 թ. Մ. Շահինյանը հղանում է Հայաստանի էլեկտրիֆիկացման մասին վեպ գրելու միտքը, որը կապված էր հեղինակի կողմից սովետա-

3 М. Шагинян, Дневники, 1917—1931 гг., т. 2 68:

4 М. Шагинян, Семья Ульяновых, т. 2 666:

5 См. «Ленин в нашей жизни», М., 1965, т. 2 93:

6 М. Шагинян, Дневники, т. 2 256:

7 Սույն տեղում, էջ 338:

8 Նույն տեղում:

կան իրականության ուշադիր ուսումնասիրության հետ: «Դեռևս իմ վերջին ուղևորության ժամանակ Հայաստան (1926 թ.) ես սկսեցի ինձ համար շոշափել դիտարկման կայուն, մշտական նյութը և այն գտա Զանգվի վրա կառուցվող առաջին փոքրիկ հիդրոկայանի՝ Երգէսի շինարարությունում...

Վերադառնալով Լենինդրադ, ես անմիջապես սկսեցի ուսումնասիրել Լենինի երկերի ժողովածուի առաջին՝ այն ժամանակ հենց նոր լույս տեսած հատորները, ԳՈԷԼՌՈ-ի մեծ ալբոմը և իմ թերթային զխավոր խմբագրի ու բարեկամի՝ Ի. Ի. Սկվորցով-Ստեպանովի «ՌՍՖՇ էլեկտրիֆիկացման մասին» հետաքրքիր դիրքը...»⁹:

Սովետական իրականությունը Մ. Շահինյանին օր-օրի ապացուցում է Լենինյան գաղափարների ճշմարտությունը, նրանց հսկայական դերն ու նշանակությունը մասսաների դաստիարակության, նոր մարդու հոգևոր և գաղափարական վերափոխման, աշխատանքի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքի գործում: Եվ պատահական չէ, որ Մ. Շահինյանը՝ սոցիալիստական շինարարությանը, մարդկային նոր հարաբերությունների բացահայտմանը նվիրված իր «Հիդրոցենտրալ» վեպի բնաբան է ընտրում Լենինյան հետևյալ մարգարեական խոսքերը. «Քաղաքական իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելուց հետո... օրինակի ուժն առաջին անգամն է, որ հնարավորություն է ստանում իր մասսայական ազդեցությունը ցույց տալու»¹⁰:

Լենինյան կերպարի շահինյանական բացահայտումն ընթանում է գործիական ավանդույթների հունով, սովետական գրականության այն լավագույն ստեղծագործությունների ոգով, որոնցում Լենին-մարդու, Լենին-մտածողի, Լենին-առաջնորդի ու կազմակերպչի պրոբլեմները դիտվում են որպես մի միասնություն, մեկը մյուսին լրացնելով ստեղծում Իլյիչի միլիոններին հարադատ ու սիրելի դարձած ամբողջացած կերպարը, քանի որ «աշխարհի մարդկանց համար Վլադիմիր Իլյիչ Լենինը եղել և մնում է մարդկության լավագույն զավակի կերպար: Կա ինչ սիրելի: Կա ում սիրելի» — ինչպես գրում էր Մ. Շահինյանը 1924 թ. իր «Լենինի մահը» հոդվածում: Այդ սիրուց էլ «կառաջանա Լենինի իրական լեգենդը», — ասում էր նա և այն բացահայտելու համար ամենից առաջ պետք է դիմել Լենինի գործի, նրա հարուստ ժառանգության ուսումնասիրությանը:

Հարադատ մնալով Լենինյան կերպարի բացահայտման ու պատկերման սովետական գրականության լավագույն տրադիցիաներին, Մ. Շահինյանը միևնույն ժամանակ խնդրին մոտենում է յուրովի: Նա չի ձգտում տալ Իլյիչի կերպարի նեղ, «դիմանկարային» նկարագիրը, այլ աշխատում է նրան պատկերել քաղաքական-հասարակական, մարդկային հարաբերությունների լայն ու բազմակողմանի ոլորտում, որտեղ առավել չափով են բացահայտվում Լենինյան հարուստ բնավորության բազմապիսի ու բազմերանգ կողմերը: Դրա համար էլ Լենինի կերպարի շահինյանական բացահայտումը ընթանում է գերազանցապես Իլյիչի շրջապատի, նրա ղինակիցների, ընթերցած գրքերի, բազմաքանակ ծանոթ ու բուրբուրվին նոր և անհայտ սկզբնաղբյուր-փաստաթղթերի, նույնիսկ Լենինյան բնորոշ ձեռագրի շուրջը սրված մանրազնին ու խոր ուսումնասիրությունների և դրանցից բխող դատողությունների ու եզրակացու-

9 М. Шагинян, Семья Ульяновых, էջ 669:

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 312:

թյունների միջոցով, որոնք տաղանդավոր գրողի գրչի ներքո ստանում են գեղարվեստական հնչեղություն ու գունեղություն, ներգործուն ուժ և հմայք։

«... Վիպասանի համար ամենադժվար ու ամենահետաքրքիր աշխատանքը այն բանի բացահայտումն է, թե ինչպես են ձևավորվել Իլլիշի բնավորությունը և նրա համոզմունքները», — գրում է Մ. Շահինյանը¹¹։

Տարիներ շարունակ աշխատելով լենինյան թեմայի վրա, գրողը հարազատ է մնացել իր իսկ կողմից առաջ քաշված սկզբունքին. տալ այն երևույթների ներքին իմաստը, որոնցից յուրաքանչյուրը ինչ-որ շափով նսպատել է Վոլոդյա Ուլյանովի աշխարհայացքի ու բնավորության ձևավորմանը, օգնել նրան դառնալու Լենին։

Ոչ մի վայրկյան չհեռանալով կյանքի, պատմական ժամանակաշրջանի կոնկրետ իրականության փաստական դեպքերի ճշգրիտ, հարազատ և ռեալիստական վերարտադրումից, Լենինին շրջապատող հարադատների, բարեկամների ու ընկերների անձնական ու հասարակական հետաքրքրությունների այն առանձնահատուկ մթնոլորտի նկարագրից, որը ծնել է հեղափոխության մեծ մարտիկին ու ղեկավարին, Մ. Շահինյանը լենինյան թեմային նվիրված իր բազմաթիվ գործերում կարողանում է ստեղծել այն միջավայրը, որը նսպատել է լենինյան աշխարհայացքի ու բնավորության գծերի ձևավորմանը, գծեր, որոնք ի մի առնված ամբողջացնում են Իլլիշի կենդանի կերպարը։ Այդ բանը Մ. Շահինյանին հաջողվում է նույնիսկ այն դեպքերում, երբ հեղինակը անմիջականորեն չի խոսում Լենինի մասին, երբ նրա պատմվածքներում, վեպերում, հոդվածներում կամ ակնարկներում հանդես չի գալիս ինքը՝ Լենինը։ Մ. Շահինյանը դարմանալիորեն կարողանում է «թափանցել փաստերի էություն մեջ», նրանցից «բամել» այն հնարավորությունները, որոնք խառնվելով գրողի ստեղծագործական երևակայությանը (որին, ի դեպ ասած, Մ. Շահինյանը միշտ էլ կարողանում է սանձել մտածողի ու հետադոտողի կամքով), միանգամայն համողիչ կերպով ամբողջացնում են հերոսի կերպարը։

«Պատմական փաստերը միաբնիշ չեն։ Յուրաքանչյուր փաստի մեջ, որպես կիզակետում, կենտրոնացված է անցյալի և ներկայի ներդրումների անվերջ բազմազանություն։ Դա նման է ծովի, որի մեջ թափվում են գետեր ու գետակներ, վտակներ ու առվակներ և անհրաժեշտ է առանձնացնել, շոշափել յուրաքանչյուր վտակը, եթե ցանկանում ես գունագեղ վերարտադրել ամբողջ պատկերը։ Այդ դեպքում ինչպիսի հարստություն է բացահայտվում «պատմական փաստ», «պատմական իրադրություն» հասկացությունների մեջ։ Դա ես անվանում եմ կյանքի ստեղծագործական վերակենդանացում արվեստի, ինչպես նաև գիտության մեջ¹², — ասում է Մ. Շահինյանը։

1930-ական թթ. կեսերից Մ. Շահինյանը հղանում է Վ. Ի. Լենինի մանկությանը և պատանեկությանը նվիրված «Պատմության տոմսակը» եռապատումը։ Այն ընդգրկում է Լենինի ծնողների ամուսնությունից ընդհուպ մինչև Իլլիշի գիմնազիայի ավարտական քննությունները, երբ Վոլոդյա Ուլյանովը պատմության առարկայի քննության ժամանակ դուրս է քաշում իր հայտնի տոմսակը, որտեղ «...կարծես թե դիտմամբ անցնում են՝ համաշխարհային

¹¹ М. Шагинян, Билет по истории, М., 1969, № 15.

¹² «Литературная газета», 1965, № 53.

ողջ պատմության ընթացքում, հեղափոխության և դասակարգային պայքարի հանգուցային կետերին վերաբերող հարցերը»¹³:

«Պատմության տոմսակը» եռապատումի առաջին մասը՝ «Ուլյանովների ընտանիքը» վեպ-ժամանակագրությունը լույս տեսավ 1938 թ.: Այն անմիջապես արժանացավ Իլյիչի հարազատների ու մերձավորների՝ Ն. Կ. Կրուպսկայայի, Դ. Ի. Ուլյանովի, Ն. Ի. Վերետիննիկովի և այլոց բարձր գնահատականին:

«Ուլյանովների ընտանիքը» հետագայում վերամշակվեց և լույս տեսավ 1958 թ.: Վեպը թարգմանվել է Սովետական Միության 13 լեզուներով (այդ թվում և հայերեն), ինչպես նաև գերմաներեն, չեխերեն, ֆիններեն, իսկ 1968 թ. աշնանը՝ նաև ճապոներեն: Ճապոնացի պրոֆեսոր Տսուտոմու Իտոն հեղինակին ուղղված նամակում գրում էր.

«Լենինի ընտանիքի մասին Ձեր հիանալի պատմությունը շուտով լույս կտեսնի «Միրախյա» («Ապագա») հրատարակչությունում... Մենք սրտանց շնորհակալ կլինենք, եթե Դուք Լենինի մասին Ձեր չափազանց արժեքավոր պատմությունը ուղեկցեիք ճապոնացի ընթերցողներին ուղղված համառոտակի առաջաբան-ողջույնով»¹⁴:

«Ուլյանովների ընտանիքի», ինչպես Շահինյանի համարյա բոլոր գործերի ստեղծմանը նախորդում են երկարատև հետազոտություններն ու պրպրտումները: Ուլյանովսկի, Աստրախանի, Լենինգրադի և մերձվոլգյան մի շարք քաղաքների արխիվների ուշադիր ուսումնասիրությունները, Ուլյանովների ընտանիքի տասնյակ ժամանակակիցների, ծանոթների հետ հանդիպումները, հատկապես Լենինի հոր՝ Իլյա Նիկոլաևիչի գործունեությանը վերաբերող մի շարք փաստաթղթերի, վերջինիս կողմից որպես ժողովրդական դպրոցների տեսուչի ներկայացրած տարեկան հաշվետվությունների ու զեկուցագրերի վերլուծությունները, հայտնի «Ուլյանովականների», — ժողովրդական ուսուցիչների վկայությունների մանրամասն ու բարեխիղճ ուսումնասիրությունները ընկած են այս հիանալի երկի հիմքում և նրան հաղորդում են տվյալ թեմայի համար այնքան կարևոր ճշմարտապատումը:

«Ուլյանովների ընտանիքը» ստեղծելիս Մ. Շահինյանը առաջ է քաշել սովետական պատմավիպասանության մի կարևոր սկզբունք. անցյալը ներկայացնել ոչ թե այն ոճավորելով, այլ մատուցել որպես ներկա ժամանակ այդ նույն անցյալի՝ մեզ համար արդեն պատմական դարձած հերոսների համար:

«Ինչպես եմ աշխատել «Ուլյանովների ընտանիքի» վրա» հոդվածում Շահինյանը գրում էր. «Սովետական և արտասահմանյան շատ վիպասաններ, ձեռնամուխ լինելով այսպես կոչված «պատմական վեպին», կարծում են, որ իրենց հիմնական խնդիրը ոճավորումն է: Որպեսզի վերակենդանացնեն վեպի գործողությանը վերաբերող դարաշրջանը, նրանք հաճախ խորանում են այդ դարաշրջանի լեզվական առանձնահատկությունների մեջ, վերակենդանացնում արխաիզմները — գործածությունից դուրս եկած առանձին բառերը, շարահյուսությունը իր հնացած ձևերով, ընկնում մանրամասների հետևից, հագուստի ձևի հետևից, բերում դեպքեր թերթերից, մի խոսքով, բարեխիղճորեն վերա-

13 М. Шагинян, Билет по истории, էջ 29:

14 «Известия», 1968, 5 сентября.

կանգնում միջավայրը, իսկ իրենց հերոսներին ստիպում ենթարկվելու այդ ոճավորված միջավայրին...

Ճիշտ պատկերացնելու համար պատմական այն դարաշրջանը, որը դուք ցանկանում եք պատկերել, դուք պետք է ժամանակավորապես բոլորովին մոռանաք ամեն տեսակի ոճավորում, ամեն տեսակի թանգարանային բան, այսինքն՝ դեն նետեք նյութական մանրուքները, լեզվի հնացած առանձնահատկությունները, գործածությունից դուրս եկած հազուատն ու միջավայրը, և սկսեք իրենից՝ մարդուց-ձեր պատմվածքի հերոսից, որի համար նրա ժամանակը հենց այն ներկա, ժամանակակից ժամանակն է, ինչպես ձեզ համար՝ ձեր ժամանակը...»¹⁵։ Մ. Շահինյանի կարծիքով «...պետք է կարողանալ պատմական մարդուն պատկերել իր դարաշրջանի պատմական միջավայրում, հենց այս «ներկա ժամանակի» բնական ու անհրաժեշտ ղգացման մեջ»¹⁶։

«Ուլյանովների ընտանիքը» վեպ-ժամանակագրությունն ընդգրկում է մոտ մեկ տասնամյակ՝ սկսած Իլյա Նիկոլաևիչ Ուլյանովի և Մարիա Ալեքսանդրովնա Բլանկի առաջին ծանոթությունից, որը տեղի է ունեցել 1861 թ. նոյեմբերին Պենդայում, մինչև 1870 թ. ապրիլ ամիսը, երբ Սիմբիրսկի նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսուչ Ի. Ն. Ուլյանովի ընտանիքում ծնվում է չորրորդ երեխան՝ Վլադիմիր Իլյիչը։ Այդ տասնամյակում էր, որ հրապարակվեց 1861 թ. փետրվարի 19-ի մանիֆեստը, ծայր առան գյուղացիական հուղումները, տեղի ունեցավ Ն. Գ. Ջերնիշևսկու բանտարկությունը, Պիսարևը հանդես էր գալիս իր դրական-քննադատական ելույթներով, «Սովրեմեննիկի» խմբագրության ներսում սրվում էր ներքին պայքարը, Կարակոզովը կրակեց ցարի վրա և պատմական այլ կարևոր անցքեր տեղի ունեցան։ Այս բոլորը Մ. Շահինյանի կողմից դիտվում է վեպի հերոսների ճակատագրի վրա ունեցած ազդեցության, նրանց քաղաքական հայացքների, բարոյական համոզմունքների ձևավորման տեսանկյունից։ Շահինյանը ցույց է տալիս, թե ինչպես այն ժամանակվա հասարակական պայքարը կենդանի արձագանք էր գտնում Իլյա Նիկոլաևիչի, Մարիա Ալեքսանդրովնայի և վեպի մյուս հերոսների սրտերում, չնայած ո՛չ Իլյա Նիկոլաևիչը, ո՛չ Մարիա Ալեքսանդրովնան և ո՛չ էլ վեպի գործող անձանց մեծ մասը այդ դեպքերի անմիջական մասնակիցները չէին և նույնիսկ ոչ միշտ՝ դրանց ականատեսները։ Դրա համար էլ նկարագրման կիզակետ ընտրելով Ուլյանովների ընտանիքը, հեղինակը ամենևին էլ չի սահմանափակվում սոսկ այդ մեկ ընտանիքի ներքին կյանքի նկարագրությամբ, այլ մանրամասնորեն և զեղարվեստական շափի մեծ ղգացումով ցույց է տալիս այն բոլոր օղակներն ու թելերը, որ կապում են անհատական, ընտանեական կյանքը տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր հետաքրքրությունների, դարաշրջանի ղգացման ու առաջընթացի ղխավոր տենդենցների հետ։

Մ. Շահինյանը սեղմ, սակայն միանգամայն համոզիչ կերպով է պատկերում 1861 թ. ռեֆորմից հետո Նիժնի Նովգորոդի, Պենդայի, Սիմբիրսկի և Ռուսաստանի այլ նահանգներում տիրող մթնոլորտը, երբ անընդհատ բռնկվող գյուղացիական հուղումներն ու ապստամբությունները հանգիստ չէին տալիս

¹⁵ М. Шагинян, Как я работала над «Семьей Ульяновых», «Вопросы литературы», 1963, № 7, էջ 90—91։

¹⁶ Նույն տեղում։

ցարական կառավարությանը, իսկ երկրի առաջադեմ մարդկանց մեկ անգամ էս ապացուցում ունեցող մի ողջ հակաժողովրդական էությունը: Հեղինակը մեծագույն սիրով է բացահայտում (առանց մաղաչափ անգամ իդեալականացնելու) Իլյա Նիկոլաևիչի՝ որպես իր ժամանակի ամենաառաջադեմ ու տաղանդավոր մանկավարժներից մեկի կերպարը, տալիս Մարիա Ալեքսանդրովնայի՝ մեծագույն տակտի ու հոգևոր հարուստ կուլտուրայի տեր կնոջ պատկերը: Ընթերցողը խորապես համոզվում է, որ Վ. Ի. Լենինը իր բնավորության շատ գծեր ստացել է ծնողներից:

Զրկանքներով լի կյանքը դեռևս մանուկ հասակից սովորեցնում է Իլյա Նիկոլաևիչին ճշտապահության ու պահանջկոտության իր և իր շրջապատի նկատմամբ: Եվ միայն մեծ աշխատասիրությունն ու կարգապահությունը, մտավոր հարուստ ունակություններն են, որ հնարավորություն են տալիս հասարակ դերձակի տղային հասնել համալսարանն ավարտածի ու ֆիզիկայի ավագ ուսուցչի կոչմանը, իսկ ապա՝ Սիմբիրսկի նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսչի պաշտոնին:

Հետևելով իր ժամանակի պայծառ դեմքերի՝ Ն. Ի. Լոբաչևսկու, Ն. Ս. Կոխի մանկավարժական մեթոդների լավագույն կողմերին, Իլյա Նիկոլաևիչը իր մանկավարժական գործունեության մեջ հասնում է այն համոզմանը, որ հարկավոր է «ոչ թե ճառ ասել, այլ գործնական գիտելիքներ տալ» սովորողներին: Եվ այստեղից էլ հասկանալի է այն սերն ու հարգանքը, որ տածում էին իրենց ուսուցչի նկատմամբ Պենդայի աղնվական ինստիտուտի սաները:

«... Ստիպել ամեն ինչ մոռանալ շրջապատում և լսել դասը—գա մեծ ու դժվարին արվեստ է: Ֆիզիկայի ուսուցիչ Իլյա Նիկոլաևիչին այդ հաջողվում էր ոչ միայն նրա համար, որ նա սիրում էր իր առարկան ու տարվում նրանով, երբ խոսում էր նրա մասին... Այլ այդ հաջողվում էր դեպի մարդը ունեցած նրա հաղվադյուտ նրբազգացողությունից:

Նրբազգացողությունն ու տակտը—դրանք դժվարին ու ավելի հազվագյուտ հատկություններ են, քան տաղանդը, դրանք չի կարելի ձևացնել առանց կեղծելու: Դրանք հարկավոր է ունենալ և այն ժամանակ նրանք հանդես կգան իրենց իրենց հաղար ու մի մանրուքներում... Իլյա Նիկոլաևիչին հատուկ էր համարյա ֆիզիկապես զգալ ուրիշի էությունը, աշակերտի բնավորությունը, խառնվածքը, տրամադրությունը, զգալ իսկական ներքին հավասարակշռությունը՝ նրբազգացողության այդ զլխավոր պայմանով... և դասարանում բոլորն էլ անմիջապես զգացին, որ նրանցից յուրաքանչյուրի մեջ նա տեսնում ու հարգում է իրեն հավասար մարդուն»¹⁷:

Աղնվաբար աշխատել ժողովրդի համար, օգնել վեր հանելու նրա մեջ թաքնված հարուստ ունակությունները, ամեն կերպ տանելի դարձնել հարադատ ժողովրդի կեցությունը—ահա Իլյա Նիկոլաևիչ Ուլյանովի կյանքի նշանաբանը: Երբ նրան նշանակում են Սիմբիրսկի ժողովրդական ուսումնարանի տեսուչ, կինը՝ Մարիա Ալեքսանդրովնան նկատում է.

— Չէ՞ որ այդ ծառայությունը մինիստրական է: Դու նախօրոք շատ էլ մի իդեալականացնի այդ պաշտոնը: Դու հիմա մանկավարժ ես, իսկ այնտեղ պաշտոնյա ես լինելու:

17 М. III а г н я и, Семья Ульяновых, М., 1958, էջ 39—40:

— Ես այդ գործում հոգիս կներդնեմ...¹⁸, — պատասխանում է Իլյա Նիկոլաևիչը: Եվ այսպես ամենուրեք. ներդնել իր բոլոր ուժերը հանուն ժողովրդի լուսավորության ու բարեկեցության — սա է նրա գործունեության նշանաբանը:

Մարիա Ալեքսանդրովնան նույնպես փոքր հասակից իր մեջ զարգացրել է պահանջկոտություն իր նկատմամբ, խնայողություն, կարգապահություն, այդ բոլորը զուգակցելով հոգևոր հարուստ ունակությունների հետ: Հավասարակշռված, ծնողական մեծ համբերատարությամբ լի վերաբերմունքը դեպի երեխաները ու նրանց հետաքրքրությունները Մարիա Ալեքսանդրովնայի մեջ խելացիորեն զուգակցվում են ամուսնու լավագույն ընկերն ու օգնականը լինելու հետ, ընտանիքում ստեղծում մեկը մյուսի նկատմամբ խոր հարգանքի մթնոլորտ, և, ինչպես գրում է հեղինակը, Մարիա Ալեքսանդրովնան «շարժվում էր, քայլում ամուսնու հետաքրքրությունների ոլորտում»: Այստեղից էլ այն ամենախոր հարգանքը աշխատանքի, նրա ստեղծած վաստակի ու բարիքների նկատմամբ, որ դառնում է Ուլյանովների ընտանիքի ղեկավար սկզբունքներից մեկը: Ուլյանովների ընտանիքում առաջնորդվում էին 'Ն. Ուշինսկու հետևյալ խոսքերով. «Աշխատանքը ինքնին նույնքան անհրաժեշտ է մարդուն նրա հոգևոր առողջության համար, որքան և մաքուր օդը՝ նրա ֆիզիկական առողջության համար»: Մ. Շահինյանին հաջողվել է տալ լավագույն մանկավարժի, ծնողական մեծագույն տակտի տեր ու միմյանց նկատմամբ մարդկային խոր հարգանք տաժող ամուսինների կերպարները հանձինս Իլյա Նիկոլաևիչի և Մարիա Ալեքսանդրովնայի «Ուլյանովների ընտանիքը» մեղ չափազանց մոտիկից է ծանոթացնում այն մեծ կյանքի ակունքներին, որ հետագայում պետք է կրի Վլադիմիր Իլյիչ Լենին անունը:

«Ուլյանովների ընտանիքը» վեպի առաջին սեագիր տարբերակի կապակցությամբ Ն. Կ. Կրուպսկայան Մ. Շահինյանին գրած նամակ-գրախոսականում նշում էր. «Ընթերցող խոստովանած, ես շատ դեմ եմ Իլյիչի կյանքից գրված վեպերին, պատմվածքներին, սցենարներին»:

Որքան էլ որ ջանում է գրողը, նրա մոտ սովորաբար ստացվում է ոչ թե Իլյիչի, կենդանի Իլյիչի կերպարը, այլ ինչ-որ ուրիշ մարդու կերպար, իսկ որ զխավորն է՝ աղավաղվում է ժամանակաշրջանը... Որոշ վախով ես սկսեցի կարդալ և Ձեր ձեռագիրը... ընթերցելով Ձեր ձեռագիրը, ես զգացի, թե որքան Դուք ճիշտ եք մոտեցել հարցին: Թերևս միայն փորձված գրողը կարող է նյութի ուսումնասիրության հիման վրա տալ այդ ժամանակաշրջանի պատկերը: Դա ունի նաև պատմական տեսակետից մեծ նշանակություն: Ինձ դուր եկավ ոչ միայն Ձեր մտահղացումը, այլև ինքը՝ ձեռագիրը»¹⁹:

Իսկ Վլադիմիր Իլյիչի կրտսեր եղբայր Դմիտրի Ուլյանովը դեռևս 1938 թ. այսպիսի գնահատական է տվել վեպին «Իզվեստիայում». «Մ. Շահինյանը ոչ միայն ֆիքսել է Ուլյանովների ընտանիքի մասին եղած պատմական փաստաթղթերը, այլև դրանք մարմնավորել գեղարվեստական կերպարներում... չի աղավաղել պատմական փաստերը: Ընթերցողի առջև հառնում են պատմականորեն ճշմարիտ, կենդանի կերպարներ: Իրերը ընթերցողներին ծանոթացնում է հետաքրքրությունների ու ակնկալությունների այն միջավայրին, որի մեջ ապրում էր Ուլյանովների ընտանիքը»:

¹⁸ Նույն տեղում, էջ 108:

¹⁹ «Вопросы литературы», 1963, № 7, էջ 102:

Մեջ բերելով Մ. Շահինյանի գրքի այն տողերը, որտեղ խոսվում է Ի. Ն. Ուլյանովի մանկավարժական տակտի, նրբազգացողության մասին, այն մասին, թե ինչպես Իլյա Նիկոլանիչը կարողանում էր հարգանքով վերարերվել իր սաներին, շրջապատին և ինչպես այդ հարգանքը սրանց կողմից վերադարձվում էր նրան, Դմիտրի Ուլյանովը վերոհիշյալ հոգվածում գրում էր. «Խորապես ճիշտ է: Այս հատկությունը Իլիչը լրիվ կերպով ժառանգել էր հորից, և այն մեծապես նպաստել է նրա գործի հաջողությանը»:

Կարողանալ լսել մարդկանց, նրանց հուզող հարցերին մոտենալ որպես սեփական հարցերի, շրջապատի ոչ մի երևույթի կողմից անտարբեր չանցնել, մի՞թե սա չէ Լենինյան բնավորության հմայիչ կողմերից մեկը: «Լենինի էթիկան»,— գրում է Մ. Շահինյանը,— իր բոլոր արմատներով դիալեկտիկական-մատերիալիստական գիտակցության ու զգացողության խորքերն է գնում, դա մատերիալիստի նոր էթիկան է, որի համար մյուսների կեցությունը այնպիսի ոեալ գոյություն է, ինչպես իր սեփականը, և նա հավատում է այդ ուրիշի կեցությանը, նրա աճին, նրա կենդանի, կենսունակ կողմերին»²⁰: Հենց այդ պատճառով էլ Լենինյան բնավորության գծերը կդառնան իսկական բուլշևիկի, մասսաների դեկավարի բնորոշ հատկանիշներ, իսկ «Լենինի կողմից ստեղծված գանձարանից յուրաքանչյուրը իր համար կվերցնի այն, ինչը նրան ավելի պետքական է ու հարազատ, կվերցնի որպես կյանքի մշտական օգնություն»²¹: Եվ Լենինյան բնավորությունը դառնում է «...երիտասարդության վարքի ծրագիր, կուսակցության անդամի վարքի չափանիշ...»²²: Իսկական Լենինյանի այս գծերն են բնորոշում Ե. Ստասովային, Ս. Օրջոնիկիձեին, Ն. Կրուպսկայային, Մ. Ուլյանովային, Եմ. Յարոսլավսկուն, Ա. Մյասնիկյանին և մյուս ականավոր կոմունիստ-հեղափոխականներին, որոնց Մ. Շահինյանը նվիրում է ականակներ ու հոգվածներ: «Դեպք Սերգոյի կյանքից» հոգվածում («Մամուլի աշխատողի հիշողություններ» տպագրության պատրաստվող գրքից) Մ. Շահինյանը ականավոր Լենինյան Ս. Օրջոնիկիձեի կյանքից բերում է հետևյալ փաստը. 1928 թ. «Շախտիի գործ» հայտնի կամպանիայի ժամանակ անհիմն կերպով մեղադրվում է և բանտարկվում Զանգեզուրի հանքերի ղեկավոր ինժեները: Մ. Շահինյանը այս կապակցությամբ դիմում է այն ժամանակ Կիսլովոդսկում բուժվող Օրջոնիկիձեին: Նա պատմում է, թե ինչպիսի սրտացավությամբ և ուշադրությամբ է լսում Սերգոն հարցի ողջ պատմությունը և ցույց տալիս անհրաժեշտ օգնություն և օժանդակություն, հանձնելով Մ. Շահինյանին մի նամակ այս կապակցությամբ: Նամակն ունեցավ իր գրական նշանակությունը. ինժեները բանտից ազատվեց: Հոգվածի վերջում Շահինյանը գրում է. «Ինձ կյանքում հսկայական երջանկություն վիճակվեց տեսնել իսկական բուլշևիկ-դեկավարի դեմքի արտահայտությունը, երբ նա լսում է իր մոտ եկած մարդուն»²³:

Մ. Շահինյանը 1965 թ. ավարտում է «Պատմության տոմսակը» եռապատմի հաջորդ՝ «Առաջին Համառուսաստանյանը» վեպ-ժամանակագրությունը (լույս տեսավ 1966 թ.), որն ընդգրկում էր ռուսական իրականության XIX դարի 70-ական թթ. սկզբնական տարիները: Այստեղ ևս, ինչպես «Ուլյանովների ըն-

²⁰ М. Ш а г и н я н, Урок у Ленина, сб. «Ленин в нашей жизни», М., 1965, էջ 117»

²¹ Նույն տեղում:

²² «Октябрь», 1964, № 4.

²³ «Известия», 1964, 6 ноября.

տանիքում», լենինյան թեման բացահայտվում է պատմական իրականության կոնկրետ փաստերի գեղարվեստական վերարտադրման միջոցով:

Վեպի հիմնական հանգուցային դեպքերը ծավալվում են Ռուսաստանում 1-ին պոլիտեխնիկական ցուցահանդեսի նախապատրաստման ու անցկացման շուրջը: Դա մի իրադարձություն էր, որ ժամանակին հուզեց ոչ միայն Պետերբուրգն ու Մոսկվան, այլև Ռուսաստանի խուլ ծայրամասերը: Վեպի գործողությունները տեղափոխվում են Պետերբուրգից ու Մոսկվայից մինչև մերձվոլգյան հեռուները և իրենց գիրկն առնում ռուսական մտավորականության, բուրժուազիայի, բյուրոկրատիայի ամենաբազմազան ներկայացուցիչներին: Մ. Շահինյանը միանգամայն ճիշտ է պատկերում Ռուսաստանի այն ժամանակվա գաղափարական, մտավոր կյանքը, երբ ծավալվեց ու առավել ցայտուն դրսևավորվեց Իլյա Նիկոլաևիչի լուսավորական գործունեությունը:

«Առաջին համառուսաստանյանը» խիստ փաստագրական է և շատ չնչին բացառությամբ նրա գործող անձինք «հորինված են» հեղինակի կողմից: Վեպի փաստագրությունը հեղինակի համար ինքնանպատակ չէ, այլ միջոց՝ կենդանի կերպարներ ստեղծելու, տալու դարաշրջանի ոգին՝ հետազոտողի բարեխղճությամբ:

«Առաջին համառուսաստանյանը» լենին գլխավոր թեմայի հաջորդ ակորդն է:

Մ. Շահինյանը բազմիցս նշել է այն հսկայական օգնությունը, որ նա ստացել է Վ. Ի. Լենինի հարազատներից «Ուլյանովների ընտանիքը» վեպի վրա աշխատելիս: Նա հատկապես ընդգծում է մեթոդոլոգիական այն օգնությունը, որ ցույց է տվել Ն. Կ. Կրուպսկայան հեղինակին իր առջև դրված խնդիրը լուծելիս: «Ուլյանովների ընտանիքը» գրքի վերաբերյալ գրած նամակագրախոսականում Ն. Կ. Կրուպսկայան նշում էր. «Նախ, որ Ուլյանովների ընտանիքը ցույց տալու համար ամենաճիշտը թերևս այդ ընտանիքի ապրած ժամանակի ֆոնի գեղարվեստական վերարտադրությունն է: Եվ երկրորդը՝ չի կարելի 70-ական թվականները պատկերել որպես հեղափոխական շարժման հանդարտ շրջան: Այդ շարժումը ընթացավ այլ ուղիներով, զարգացավ այլ ձևավերով»²⁴: Այս ցուցումները, ինչպես նշում է Մ. Շահինյանը, վճռական նշանակություն ունեցան նրա՝ լենինյան թեմայի վրա ամբողջ հետագա աշխատանքի համար: «Ես ուղղակի Բացահայտեցի ինձ համար 70-ական թվականները: Դրանք այն ժամանակներն էին, երբ ռուս երիտասարդությունը բարձրանում էր պատմության թատերաբեմ, գնում դեպի ժողովուրդը, դրանք «Ջեմլյա ի վոլյա» խմբակի, իսկ վերջին տարիներին՝ նաև նարոդովոլցիների ձևավորման ժամանակներն էին: Հիմա ինձ թվում է, թե առանց այդ փուլը ճանաչելու, առանց կոնկրետ իմանալու, թե ինչ բան են «Ջեմլյա ի վոլյան», «Չորնի պերեդելը», «Նարոդնայա վոլյան», ուղղակի անհնարին է հասկանալ լենինիզմի առաջացման պատմական մեծ անհրաժեշտությունը»²⁵:

«Առաջին համառուսաստանյանում», ինչպես «Ուլյանովների ընտանիքում», այն ամենը, ինչ վերաբերում է հիմնական կերպարներին՝ Ուլյանովների ընտանիքի անդամներին, խստիվ ստուգված է փաստաթղթերով: Կրկին հեղինակի ուշադրության կենտրոնում են Իլյա Նիկոլաևիչը, Մարիա Ալեքսանդ-

²⁴ «Литературная газета», 1965, № 53.

²⁵ Նույն տեղում:

յովան, հասարակական կյանքի այն ոլորտները, որոնք առնչվում էին ինչպես Իլյա Նիկոլաևիչի պետական ու մանկավարժական գործունեության, այնպես էլ 1870-ական թթ. իրականության բազմաթիվ հուզող հարցերի հետ:

Վեպը պատկերում է երիտասարդության շրջաններում այդ տարիներին առաջացած հակաբազմազանության այն ոգեշնչված մթնոլորտը, որը հող նախապատրաստեց ռուսական հեղափոխական խմբակներում մարքսիզմի պրոպագանդման համար, ցույց տալիս Լենին-Երևույթի օրգանական, պատմականորեն պայմանավորված կապը ռուսական հասարակական շարժումների հետ:

Վեպում մեծ ուշադրություն է դարձված նաև Իլյա Նիկոլաևիչի մանկավարժական գործունեության, ռուսական մանկավարժական մտքի անցյալի պատմության բազմաթիվ հարցերի լուսաբանմանը: «Իսկ այդ ասպարեզում, — ինչպես ասում է Մ. Շահինյանը, — հետաքրքիր, ուսանելի, նույնիսկ ոգեշնչող շատ բան կա, և ներկայումս ուղղակի անհրաժեշտ է իմանալ այդ բոլորը»:

1968 թ. «Օկտյաբր» ամսագրում լույս տեսավ Մ. Շահինյանի «Երիտա-նական թանգարանի գրադարանում» ակնարկը, նվիրված Լենին-մտածողի մտավոր հետաքրքրությունների լայն ոլորտի ուսումնասիրությանն ու գեղարվեստական վերարտադրությանը: Ուշի-ուշով հետևելով Լենինի լոնդոնյան կյանքի փուլերին, Մ. Շահինյանը ստեղծում է Իլյիչի մտավոր հետաքրքրու-թյունների նկարագիրը: Ակնարկում ցույց է տրված Լենինի անձնագոհ աշխա-տանքը հեղափոխական ապագա մարտերի համար տեսական զենք ստեղծելու ասպարեզում: Հեղինակի կողմից հավաքված արժեքավոր փաստերն ու տեղե-կությունները բյուրեղացված են և իմաստավորված: Զարմացնում է հեղինակի հետևողական ձգտումը՝ բացահայտել ու հասկանալ Լենինի լոնդոնյան օրերի մեծ իմաստը: Շահինյանը ընթերցողին հաղորդակից է դարձնում Լենինի ներ-քին աշխարհին, օգնում հասկանալու նրա մտքի տիտանական մեծությունն ու հեղափոխական սխրագործությունը և դրա միջոցով էլ նաև՝ մեր դարաշրջա-նը իր հսկայական վերափոխությունների պաթոսով: Ավելին, մանրամասնո-րեն ուսումնասիրելով Լենինի լոնդոնյան կյանքը, հեղինակը ներկա սերնդին է հասցնում մինչ այժմ անհայտ դեպքեր Իլյիչի կյանքից, օգնում էլ ավելի ամբողջացնելու հեղափոխության առաջնորդի միլիոններին այնքան հա-րազատ կերպարը:

Իսկական հետադոտողի կրթոտությամբ ու բարեխղճությամբ, արվեստա-գետի վարպետությամբ է գրված նաև Մ. Շահինյանի մեկ այլ «Լենինը Օպա-վայում» ակնարկը, որը նոր լույս է սփռում Իլյիչի Զեխոսլովակիայում անց-կացրած ժամանակաշրջանի վրա:

Տարբեր առիթներով Մ. Շահինյանը Լենինյան թեմային է անդրադարձել նաև իր բազմաթիվ այլ ակնարկներում, պատմվածքներում ու հրապարակա-խոսական հոդվածներում: Նրա «Հիշողություններ Ն. Կ. Կրուպսկայայի մա-սին», «Ուլյանովների ընտանիքի առաջին ուսուցիչը», «Դաս՝ առած Լենինից», «Կոմունիստի դաստիարակությունը», «Ուղևորություն դեպի Սուրսկ», «Երեք ճառ Պուշկինի մասին», «Ամենամարդկային մարդը» և բազմաթիվ այլ գործեր լուսաբանում են Լենինյան կյանքի շատ ու շատ կողմեր, որոնք ամբողջանա-լով տալիս են թեմայի շահինյանական մեկնությունը:

Մ. Շահինյանը Լենինին պատկերում է որպես աննկուն հեղափոխականի, մեծ մտածողի և կարող ու սիրված ղեկավարի, որպես միլիոնավոր աշխատա-վորների առաջնորդի և ուսուցչի: Նա հատկապես ընդգծում է Լենինյան բնա-

վորության ուրույն կողմերը: Արդեն մեր կողմից հիշատակված մարդկային տակտի ու վարվեցողության հատկանիշներից բացի, որոնք այնքան բնորոշ էին Վլադիմիր Իլյիչին, Շահինյանը կենդանի պատկերում է նաև որպես մի մարդու, որի անձնական օրինակը, նրա անսահման սերը դեպի աշխատանքը և աշխատավորը նրան դարձնում են միշտ կենդանի և մեր ու գալիք սերունդների հետ համատեղ քայլող և այդ սերունդներին ուսուցանող օրինակ:

Սովետական անվանի գրող էմ. Կադակեիչը իր «Կենդանի Փարիզում» աշխարհում գրել է. «Կենդանի կերպարի բացահայտումը վերին աստիճանի ժամանակակից խնդիր է ոչ միայն նրա համար, որ ինքը կենդանի ապագայի մարդ էր: Ճանաչել նրան, ջանալ լինել այնպիսին, ինչպիսին էր նա, նշանակում է իր մեջ հաղթահարել «Հին Ադամին», նշանակում է ինքդ քո միջից արմատախիլ անել «հնամենի բնազդների ու հին նախապաշարումների բոլոր ստորությունները»²⁶:

Կենդանի թեմայի այսօրինակ պատկերումը դարձել է սովետական գրականության կենսական խնդիրը, որի լուծման վրա են աշխատում լավագույն գրողները:

Այդ թեմայի շահինյանական արտացոլումն էլ հենց ընթանում է այս հոսանքով, միաժամանակ նոր, թարմ հոսանք բերելով իր հետ:

²⁶ «Вопросы литературы», 1964, № 1, էջ 5: